ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 01/2022

ԱԼԲԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 20 սեպտեմբերի, 2022 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի և Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Ալբերտ Այվազյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 11-ին հարուցված թիվ 01/2022 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2022 թվականի հուլիսի 6-ին «Հաղթանակ» կուսակցությունների դաշինքի ղեկավար Կարեն Արշակյանի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով Հանձնաժողովին հասցեագրված դիմումի հիման վրա Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ Ալբերտ Այվազյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ:
2. Դիմումի մեջ ներկայացվել է տեղեկություններ այն մասին, որ՝

1) 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով Ալբերտ Վարդգեսի Այվազյանը:

2) Ավագանու անդամ ընտրվելուց հետո Ալբերտ Այվազյանը ՀՀ վարչապետի 2022 թվականի հունվարի 05-ի թիվ 15-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի պաշտոնում:

3) Ալբերտ Այվազյանը մինչ օրս զբաղեցնում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամի և ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի պաշտոնները:

4) Ըստ դիմումատուի՝ Ալբերտ Այվազյանը, զբաղեցնելով ավագանու անդամի հանրային պաշտոնը, միաժամանակ զբաղեցնում է մարզպետի տեղակալի հանրային պաշտոնը, որը «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի պահանջների խախտում է:

5) Դիմումատուն խնդրել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-29-րդ հոդվածների համաձայն հարուցել վարույթ և տալ եզրակացություն Ալբերտ Այվազյանի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության մասին:

3. Դիմումին կից ներկայացվել է՝

1) ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքում Ախուրյան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին թիվ 32 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ N 30 արձանագրության պատճենը,

2) ՀՀ վարչապետի 2022 թվականի հունվարի 05-ի թիվ 15-Ա որոշման պատճենը:

4. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայքից (https://www.akhuryan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=d&dt=Councilor&f=true) իրական ռեժիմում ներբեռնված տեղեկատվության համաձայն՝ Ալբերտ Այվազյանը 2021 թվականի ընտրությունների արդյունքներով հանդիսանում է Ախուրյան համայնքի ավագանու անդամ:

5. ՀՀ Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքից (http://shirak.mtad.am/structure/) իրական ռեժիմում ներբեռնված տեղեկատվության համաձայն՝ Ալբերտ Այվազյանը զբաղեցնում է ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի պաշտոնը:

6. 2022 թվականի հուլիսի 11-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 01/2022 որոշումը՝ «Հաղթանակ» կուսակցությունների դաշինքի ղեկավար Կարեն Արշակյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

7. 2022 թվականի հուլիսի 13-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Ալբերտ Այվազյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Փոստային առաքման ծրարը՝ «Անհայտ» մակնշումով հետ է վերադարձվել:

8. 2022 թվականի հուլիսի 20-ին վարույթ հարուցելու մասին որոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է Ալբերտ Այվազյանին, վերջինիս կողմից նույն օրը ստացվել է էլեկտրոնային հավաստում՝ որոշումը ստանալու վերաբերյալ:

9. Հանձնաժողովում 2022 թվականի հուլիսի 29-ին ստացված գրությամբ Ալբերտ Այվազյանը ներկայացրել է պարզաբանում հարուցված վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ: Գրությանը կից ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 14-ի թիվ 1 արձանագրությունը՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ Ալբերտ Այվազյանի՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամ դադարեցնելու մասին, ինչպես նաև նշված արձանագրությանն ի պատասխան թիվ 32 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին հասցեագրված 2022 թվականի փետրվարի 21-ի գրությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2022 թվականի հուլիսի 29-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Ալբերտ Այվազյանը ներկայացրել է պարզաբանումներ վարույթում քննարկվող հարցի

առնչությամբ: Ալբերտ Այվազյանի կողմից վկայակոչվել են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի դրույթները՝ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամ դադարեցման, դադարման վերաբերյալ, միաժամանակ, ընդգծվել է նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, համաձայն որի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամ դադարեցվում են, եթե նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել համայնքի ղեկավարին:

Ալբերտ Այվազյանը հղում է կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ Համայնքի ավագանու անդամի այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները սահմանող 19-րդ հոդվածի իրավանորմերին, որոնց համաձայն՝ Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

1) զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում.

2) լինել համայնքի ղեկավար (բացառությամբ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու), համայնքի ղեկավարի պաշտոնակատար (բացառությամբ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու) կամ վարչական ղեկավար.

3) աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Ալբերտ Այվազյանի դիրքորոշման համաձայն՝ մինչև օրս իր կողմից չեն խախտվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջները:

Վկայակոչվել են նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները՝ ինչպես մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ, այնպես էլ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած խմբագրությամբ:

Ալբերտ Այվազյանի պարզաբանման համաձայն, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում կիրառվում է ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը, հետևաբար, առաջնությունը տվյալ դեպքում տրվում է 2002 թվականի ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին:

Ելնելով վերոգրյալից՝ Ալբերտ Այվազյանը գտել է, որ իր կողմից չեն խախտվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված այլ պաշտոն զբաղեցնելու սահմանափակումները:

Միաժամանակ, Ալբերտ Այվազյանը նշել է, որ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամ դադարեցման վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 14-ի թիվ 1 արձանագրությունն ուղարկվել է թիվ 32 տարածքային ընտրական հանձնաժողով, սակայն այն մերժվել է վերջինի կողմից՝ 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ Ե-108 գրությամբ:

Մարզպետի տեղակալի գործունեությանն առնչվող տեղեկություններ

ՀՀ Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքից (http://shirak.mtad.am/structure/) իրական ռեժիմում ստացված տեղեկատվության համաձայն՝ Ալբերտ Այվազյանը 2022 թվականի հունվարի 05-ից զբաղեցնում է ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի պաշտոնը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. ***2021 թվականի դեկտեմբերի 5-ին*** ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով Ալբերտ Վարդգեսի Այվազյանը (որպես ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու ընտրված անդամ գրանցվել է թիվ 32 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ N 30 արձանագրությամբ), ով շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:
2. ՀՀ վարչապետի ***2022 թվականի հունվարի 05-ի*** թիվ 15-Ա որոշման համաձայն՝ Ալբերտ Այվազյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, ով շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

IV. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող** անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց)** հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի ***1-ին մասով սահմանված պահանջների կատարումը***:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ **համայնքի ավագանու անդամը** չի կարող միաժամանակ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում, լինել համայնքի ղեկավար,

համայնքի ղեկավարի պաշտոնակատար կամ վարչական ղեկավար, աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ պետական և ***համայնքային:*** Նույն հոդվածի համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ ***քաղաքական,*** վարչական և հայեցողական:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***համայնքային քաղաքական պաշտոններն են*** համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, ***համայնքի ավագանու անդամի*** պաշտոնները:

Մարզպետի տեղակալի պաշտոնը, համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, **պետական վարչական** պաշտոն է, այսինքն՝ նույն օրենքի իմաստով՝ **հանրային պաշտոն**, հետևապես, վերջինիս նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ մարզպետի տեղակալի՝ պետական վարչական պաշտոնը հանդիսանում է ***հանրային պաշտոն***, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը **համայնքային քաղաքական** պաշտոն է, ուստի Օրենքի իմաստով՝ մարզպետի տեղակալի պաշտոնը զբաղեցնող անձի համար այն չի դիտարկվում ***իբրև իր կարգավիճակով պայմանավորված այլ պաշտոն:***

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց** (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի ***1-ին մասով սահմանված պահանջների կատարումը***:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Ալբերտ Այվազյանը ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի պաշտոնի հետ միաժամանակ զբաղեցրել է **իր կարգավիճակով**

չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում՝ հանդիսանալով ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամ:

Վարույթի մասնակցի կողմից ներկայացվել են պարզաբանումներ իր կողմից՝ ***որպես ավագանու անդամի***, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի դրույթների պահանջները պահպանված լինելու վերաբերյալ:

Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի «***Համայնքի ավագանու անդամի այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումը***» վերտառությամբ 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են կոնկրետ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոնները:

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

1) զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում.

2) լինել համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի պաշտոնակատար կամ վարչական ղեկավար.

3) աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Տվյալ պարագայում օրենսդիրը սահմանել է համայնքի ավագանու անդամին ներկայացվող անհամատեղելիության հատուկ պահանջներ, ուստի վերջիններիս նկատմամբ կիրառելի են նշված պահանջները: Ավելին, նշված պահանջների չպահպանման, ինչպես նաև զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայելու կամ ծառայության անցնելու դեպքերում համայնքի ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

Մինչդեռ սույն դեպքում պաշտոնի անհամատեղելիությունը ոչ թե առնչվում է ավագանու պաշտոնին, այլ ***մարզպետի տեղակալի պաշտոնին և տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված անհամատեղելիությանը***, իսկ վերջիններիս վրա տարածվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր **անհամատեղելիության պահանջն** առ այն, որ վերջիններս ***<u>չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն</u> պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում:***

Եթե սույն դեպքն առնչվեր ավագանու պաշտոնին, ապա Ալբերտ Այվազյանի կողմից օրենսդրությամբ սահմանված **անհամատեղելիության պահանջների** խախտման դեպքում վերջինիս համար որպես ավագանի լիազորությունների դադարեցման հիմք կառաջանար: Մինչդեռ, սույն դեպքում մարզպետի տեղակալի կողմի **անհամատեղելիության պահանջների** խախտումը հիմք է մարզպետի տեղակալի լիազորությունների դադարեցման:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի պահանջների վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված **հանրային պաշտոն** *զբաղեցնող* ***ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանը***, միաժամանակ զբաղեցնելով ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամի պաշտոնը, զբաղեցնում է իր ***կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում:*** Ալբերտ Այվազյանի կողմից մարզպետի տեղակալի պաշտոնում նշանակվելուց հետո մեկ ամսվա ընթացքում չի ապահովվել Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը:

Ըստ գործում առկա փաստական տվյալների՝ ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանի կողմից որևէ գործողություն չի իրականացվել համայնքի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու ուղղությամբ: Արդյունքում վերջինս խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանի կողմից խախտվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ